



ՄԵՂՈՒՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

20-րդ դարի 90-ականներից ի վեր մեղուների տեսակների բազմազանությունն աշխարհում նվազել է 25%-ով: Վերջին տարիներին գրանցվում է մեղուների զանգվածային անկում:

Մեղուների անհետացման հետևանքները

Փոշոտման արդյունավետության տեսանկյունից ոչ մի միջատ չի կարող համեմատվել մեղուների հետ: Այս փոքրիկ աշխատավորները պատասխանատու են գոյություն ունեցող, այդ թվում՝ մարդկանց կողմից օգտագործվող 80 - 84% բույսերի և ծառերի փոշոտման համար:

Փոշոտող միջատների ոչնչացման հետևանքները չեն սահմանափակվի մեղվաբուծական արտադրանքների անհետացմամբ: Մեղուների վերացմամբ կանհետանան բազմաթիվ բուսատեսակներ և դրանցով սնվող կենդանիներ ու թռչուններ:

Կխախտվի կենսաբանական հավասարակշռությունը: Ըստ գիտնականների կանխատեսումների, մեղուների անկման բարձր մակարդակը 2035թ.-ին կհանգեցնի վերջիններիս վերացման, որի հետևանքով մարդկությունը կկանգնի սովամահության վտանգի առջև:



Մեղուների ոչնչացման պատճառները

Մեղուների պաշտպանության համաշխարհային ֆոնդը մեղուների ոչնչացման գլխավոր պատճառը համարում է միջատասպան թունաքիմիկատների ինտենսիվ կիրառումը: Մեր երկրում մեղուների անհետացման պատճառներից է նաև օդի միջին ջերմաստիճանի բարձրացումը, որը նպաստում է մեղուների մակաբույծների և հիվանդությունների հարուցիչների զարգացմանը, որոնց դեմ պայքարելու համար մեղուները չունեն դիմադրողականություն (իմունիտետ):

Մեղուների ոչնչացման պատճառներից են նաև՝

- անտառահատումները,
- անտառային հրդեհները,
- կենսաբազմազանության կորուստը,
- քաղաքաշինությունը,
- էլեկտրամագնիսական ճառագայթումը և այլն:



Մեղուների անհետացման կանխարգելիչ միջոցառումներ

- Սահմանափակել թունաքիմիկատների օգտագործումը՝ նախապատվությունը տալով վնասատուների դեմ պայքարի անվտանգ այլընտրանքային եղանակներին
- Աճեցնել մեղրատու մշակաբույսեր, մասնավորապես՝ երեքնուկ, առվույտ և կորնգան
- Ստեղծել մեղվապահների համար մոտակա գյուղատնտեսական հողատարածքներում թունաքիմիկատներով մշակումների ժամանակահատվածների մասին վաղ նախազգուշացման համակարգեր
- Մեղվանոցները տեղակայել թունաքիմիկատներով մշակման վայրից 5-6 կմ հեռավորության վրա
- Արգելել մեղուների բուժման նպատակով հակաբիոտիկների օգտագործումը և արտերկրից միջատների ներմուծումը
- Իրականացնել մեղվաընտանիքների մշտադիտարկում, պոպուլյացիաների վերականգնման միջոցառումներ և մեղուների բուժման մեթոդների նկատմամբ վերահսկողություն
- Տնկել հնարավորինս շատ ծառեր, թփեր և ծաղիկներ
- Մեղուներին ապահովել ջրով (Ջուրը խամսելով ծաղկափոշու և նեկտարի հետ՝ մեղուներն իրենց ընտանիքներին ապահովում են սննդով: Ջուրն անհրաժեշտ է նաև փեթակներում կայուն ջերմաստիճան ապահովելու համար:)
- Բնության գրկում գտնվելիս՝ պահպանել ընդունված վարքականոնները
- Աշնանն ու գարնանն այգիներից ու պուրակներից չհեռացնել տերևային թաղիքը



2018թ.-ից սկսած մայիսի 20-ը նշվում է որպես Մեղվի համաշխարհային օր:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանաչք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի գյուղաբնակ ձեռներեց կանաչք՝ հանուն բարձր վտանգավորության թունաքիմիկատների այլընտրանքների» ծրագրի շրջանակում:

«Հայ կանաչք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ

ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24 բ

Հեռ.՝ (+374 10) 52 36 04

Էլ. փոստ՝ office@awhhe.am

Վեբ կայք՝ <http://www.awhhe.am>